

<i>Համարը</i> N 494-Ն	<i>Տեսակը</i> Մայր
<i>Տիպը</i> Հրաման	<i>Կարգավիճակը</i> Գործում է
<i>Սկզբնաղբյուրը</i> ՀՀԳՏ 01.10.07./25(265)	<i>Ընդունման վայրը</i> Երևան
Հոդ.337	
<i>Ընդունող մարմինը</i> Ֆինանսների և էկոնոմիկայի նախարար	<i>Ընդունման ամսաթիվը</i> 08.06.2007
<i>Ստորագրող մարմինը</i> Ֆինանսների և էկոնոմիկայի նախարար	<i>Ստորագրման ամսաթիվը</i> 08.06.2007
<i>Վավերացնող մարմինը</i>	<i>Վավերացման ամսաթիվը</i>
<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i> 11.10.2007	<i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԸՆԴԵՐՔԻՑ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՀԱԶՎԱԳՑՈՒՑ ԲՆԱԿՏՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
 ՀՀ արդարադատության
 նախարարության կողմից
 11 սեպտեմբերի 2007 թ.
 Պետական գրանցման թիվ 11807328

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

8 հունիսի 2007 թ.
 ք. Երևան

N 494-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻՑ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՀԱԶՎԱԳՑՈՒՑ ԲՆԱԿՏՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի բնակտորների հազվագյուտ լինելու չափանիշները, գնահատման և վճարման պայմանները և կարգը հաստատելու մասին» N 1928-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետը.

Հրամայում եմ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ընդերքից արդյունահանված թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հազվագյուտ բնակտորների հաշվառման ձևը և կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Նախարար՝

Վ. Խաչատրյան

Հավելված
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարի 2007 թվականի հունիսի 8-ի
N 494-Ն հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻՑ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՀԱՉՎԱԳՅՈՒՏ ԲՆԱԿՏՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքից արդյունահանված թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հազվագյուտ բնակտորների հաշվառման ձևի և կարգի հետ կապված հարաբերությունները:
2. Հայաստանի Հանրապետության ընդերքից արդյունահանված և Ազգային պահուստում հաշվեգրված թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հազվագյուտ բնակտորները ենթակա են պարտադիր հաշվառման և կառավարման Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության (այսուհետ՝ Գանձարան) կողմից:
3. Պետական մարմիններում, պետական հիմնարկների և կազմակերպությունների հաշվեկշիռներում հաշվառված թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հազվագյուտ բնակտորների հաշվառումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 5-ի «Հայաստանի Հանրապետության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների և դրա բաղկացուցիչ մաս կազմող թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ազգային պահուստի համալրման, պահպանության, օգտագործման, ծախսման, հաշվառման, ինչպես նաև դրանց տեղաբաշխման և գտնվելու վայրերը որոշելու կարգը հաստատելու մասին» N 484-Ն որոշմանը համապատասխան:
4. Գանձարան մուտքագրված, թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հազվագյուտ բնակտորների դրամով արտահայտված արժեքը արտացոլվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հաշվեկշռում, դրանց շարժի վերաբերյալ տարեկան մեկ անգամ հաշվետվություն է ներկայացվում ՀՀ կառավարություն (առանձին տողով):
5. Գանձարան մուտքագրված ՀՀ ընդերքից արդյունահանված թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հազվագյուտ բնակտորները պահպանվում են դրանց համար առանձնացված հատուկ պահոցներում՝ չհրկիզվող պահարաններում, որոնք պետք է զմուսակնքված լինեն նյութական պատասխանատու անձի կողմից: Այդ արժեքների մասով տարվում է առանձնացված հատուկ հաշվառում՝ ըստ տեխնիկատնտեսական փաստաթղթերի (հաշվառման գրքեր և քարտեր):
6. Հաշվառման գրքերը (Ձև 1 և Ձև 2) կարվում են, էջակալվում են, վերջին էջում գրվում է էջերի քանակը, տրման օրը, ամիսը, տարեթիվը, և ստորագրվում Գանձարանի պետի, թանկարժեք

